

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԶԱԲԱՐԻԱ ԱԲԵՂԱ ԲԱՂՈՒՄՅԱՆ

ՎԵՐՆԱՏԱՆ ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ
ԸՆԿԱՆՈՒՄԸ ՆԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Սուրբ Նաղարդության խորհուրդը հաստատել է Տեր Նիսուս Բրիսպոսն Ավագ Նինգ-շաբթի օրը՝ Վերջին ընթրիքի ժամանակ, երբ Նա Իր պատներկու աշակերպների հետ սեղան նստեց «յառաջնում առոր բաղարջակերացն, յորժամ զգարիկն զենուին» (Մարկ. ԺԴ. 12): Բրիսպոսի Եկեղեցու կյանքում հիշարժան այս դեպքի մասին գրում են Սուրբ Մարթեոս, Սուրբ Մարկոս և Սուրբ Դուկաս Ավերարանիչները. «Եւ մինչդեռ ուրէին նոքա, առ Յիսուս հաց՝ օրհնեաց եւ երկն, եւ եր աշակերպացն՝ եւ ասէ. «Առէ՛ք, կերայ՛ք՝ այս է մարմին Իմ»: Եւ առեալ բաժակ զոնացա՛ն՝ եր նոցա եւ ասէ. «Արբէ՛ք ի դմանէ ամենեկին, զի այդ է արին Իմ նորոյ՛ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու ի թողութիւն մեղաց: Բայց ասե՛ն ո՛չ եւս արբից յայսմ հետէ ի բերոյ որթոյ մինչեւ ցօրն ցայն, յորժամ արբից զդա ընդ ձեզ նո՛ր յարբայութեան Տօր Իմոյ» (Մարթ. ԻԶ. 26-29, Մարկ. ԺԴ. 22-25, Դուկ. ԻԲ. 17-20): Իսկ չորրորդ Ավերարանի հեղինակ Նովիաննես աստվածաբան ավերարանիչը, չնայած չի մեջբերում Սուրբ Նաղարդության խորհրդի հաստատման պատմությունը և Նիսուսի խոսքերը, բայց բազում աստվածաշնչագետների կարծիքով նրա գրվածքի մի քանի տեղեր ակնարկում են Բրիսպոսի մարմնի և արյան խորհրդի հաստատման մասին¹: Այս առումով մեծ նշանակություն ունի նրա Ավերարանի Զ. գլուխը, որտեղ ավերարանիչը պատմում է հացի բազմացման հրաշքի², ինչպես նաև Կալիստոսյանի ժողովարանում կենաց հացին նվիրված Նիսուսի քարոզի մասին, որը Սուրբ Նաղարդության խորհրդի աստվածաբանության հիմքերից է: Նովիաննեսը ԺԳ. գլխում հավելում է նաև

1 Այս մասին տե՛ս **Peder Borgen**, *Bread from Heaven: An Exegetical Study of the Concept of Manna in the Gospel of John and the Writings of Philo*, *Novum Testamentum Supplement* 10, Leiden: Brill, 1965, էջ 61-98; **J. K. Howard**, *Passover and Eucharist in the Fourth Gospel*, *Scottish Journal of Theology*, Vol. 20, 1967, էջ 329-337; **Stephen Smalley**, *Liturgy and Sacrament in the Fourth Gospel*, *Evangelical Quarterly* 29, 1957, էջ 159-170, «Православная энциклопедия», Т. XVII, Москва, 2008, էջ 537-541, **Епископ Кассиан (Безобразов)**, *Водою и кровию и духом*, *Толкование на Евангелие от Иоанна*, Париж, 2001, էջ 94-103:

2 Օրինակ՝ ավերարանի այն խոսքերը, թե՛ «Եւ սնո զհացն Յիսուս, եւ զոնացա՛ն (հուն․՝ εὐχαριστοῦσα), եւ բաշխեաց բազմականցն» (Յովհ. Զ. 11) արարահայտությունը շար նման է Նամարես ավերարաններում Նաղարդության խորհրդի հաստատման ժամանակ ավանդ Նիսուսի խոսքերին:

Տիսուսի կողմից աշակերտների ուրբերը լվանալու հուզիչ և խրապական պատմությունը: Միով բանիվ՝ Նովիանուսի Ավետարանը լրացնում է իր նախորդների ասածները և բացապրում Նաղորդության խորհրդի իմաստը:

Վերջին ընթրիքին Տիսուսի կողմից Սուրբ Նաղորդության խորհրդի հաստատման մասին ամենահին վկայությունը մեջբերում է Քրիստոսի անխնոջ աշակերտ Սուրբ Պողոս առաքյալը՝ ասելով. «Զի ես ընկալայ ի Տեսնել, գոր և ձեզն աւանդեցի, եթէ Տէր Յիսուս ի գիշերին յորում մարկէր, ա՛ռ հաց. գոհացա՛ւ. երէկ ևս ասէ. Այս է իմ մարմին որ վասն ձեր. զայս արարէք առ իմոյ յիշարակի: Նոյնպէս և զբաժակն յեր ընթրեացն, ա՛ռ ևս ասէ. «Այս բաժակ նոր ուխտ է Իմով արեամբ. զայս արարէ՛ք քանիցս անգամ թէ ընկեցէ՛ք՝ առ Իմոյ յիշարակի» (Ա. Կորնթ. ԺԱ. 23-25)³: Այնուհետև առաքյալը խոսում է ոչ թե խմորյալ կամ անխմոր հացի, անապակ կամ խառնյալ գինու մասին, այլ հորդորում է ամենքիս Տիրոջ մարմնին և արյանն արժանաբար մտնելու. «Փորձեցէ՛ մարդ զանձն իւր, ևս ապա ի հացէ անորի կերիցէ, և ի բաժակէն արբցէ: Զի որ ուրէ ևս ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրում ուրէ ևս ըմպէ. զի ո՛չ խորէ զմարմինն Տեսնել» (Ա. Կորնթ. ԺԱ. 28-29): Ինչպէս գիտենք, Պողոս առաքյալն անձնապէս չի մասնակցել Վերջին ընթրիքին, ուստի կորնթացիներին ուղղած իր առաջին նամակում շեշտում է, որ ինքն այդ ամենը Տիրոջից է ստացել, որն էլ փոխանցում է նրանց: Նավանաբար կա՛մ նա Տիսուսից անձնական հայրնություն է ստացել, կա՛մ էլ սա խոստն վկայություն է Վաղ Եկեղեցում Նաղորդության խորհրդի ունեցած անառարկելի հեղինակության մասին: Տիրոջ կողմից հաստատված և առաքյալների միջոցով փոխանցված անեղ մի խորհուրդ, որ արդեն դարեր շարունակ կարարում են քրիստոնյաները՝ հաղորդվելով և ճաշակելով Քրիստոսին: Ներկաբար Պողոս առաքյալի հաղորդածը շար կարեւոր սկզբնաղբյուր է Տիրոջ մարմնի և արյան խորհուրդն ուսումնասիրողների համար: Չնայած այս ամենին, ավետարանիչների և Պողոս առաքյալի կողմից օգտագործված բառերն ու արտահայտությունները միանշանակ չեն ընկալվել քրիստոնեական Եկեղեցիներում՝ տեղի տալով զանազան մեկնաբանությունների:

Ընթերցելով Նաղորդության խորհրդի վերաբերյալ հարվածները՝ տեսնում ենք, որ ավետարանիչները և Պողոս առաքյալը չեն խոսում Քրիստոսի կողմից օգտագործված գինու մասին: Նրանք գինու փոխարեն օգտագործում են «բաժակ» բառը: Բայց քանի որ հաջորդիվ մեր Տէրն ասում է, որ Ինքն այլևս չի խմելու որթաբունկի բերքից, ուստի մեկնիչներն իրավացիորեն եզրակացնում են, որ Քրիստոս գինի է օգտագործել Վերջին ընթրիքի ժամանակ:

Նոսմադալան վարդապետության համաձայն՝ ավետարանիչների կողմից օգտագործված «բաժակ» բառը ոչ թե անապակ գինու անունն է, այլ այն ամանի, որի մեջ խառնվում են ջուրը և գինին: Նրանք նշում են, որ սրանով իրականություն է դառնում

3 Պողոս առաքյալն այս նամակը գրել է շուրջ 55 թվականին, այսինքն՝ Սուրբ Նաղորդության մասին նրա հաղորդածն ավելի էին է, քան Նամարես ավետարանների տեղեկությունները. այս մասին տե՛ս Introduction to the New Testament, Revised Edition by Werner Georg Kümmel, Translated by Howard Clark Kee, Nashville, Abingdon, 1973, էջ 279; Udo Schnelle, Einleitung in das Neue Testament, Göttingen, 2007, էջ 74, Եզնիկ ծ. վ. Պերպոսյան, Ներածություն Նոր Կրակարանի, Ս. Էջմիածին, 1996, էջ 92:

դարեր առաջ Սողոմոն իմաստունի մարգարեական խոսքը՝ մեջբերելով Առակաց գրքի Թ. 2, 5 համարները: Եվ այս մարգարեությունը հայտնվում է խաչի վրա, երբ Տիտուսի կողից արյուն և ջուր է բխում: Իսկ համարս էլ, բնականաբար, ցույց է տալիս, որ Սուրբ Պարարագը պետք է կարարել ոչ թե ջրով կամ միայն գինով, այլ գինով և ջրով միասին: Նույն այս տեսակետն են պաշտպանում նաև Գրիգոր Անավարզեցին և Սսի ժողովականները, որոնք ընկերել էին խոսքոր ճանապարհը՝ հեռանալով մեր հայրերի ուղղափառ հավաքի դավանությունից:

«Եւ բաժակ ոչ անապական գինոյ անուն է, այլ ամանոյն, յորում խառնի ջուրն և գինին», - գրում է Անավարզեցի Կաթողիկոսը (1293-1307)⁴: Իսկ 1307 թ. մարտի 19-ին՝ Սուրբ Սոֆիա տաճարում, թագավորահայր Ներսիսի, Լևոն Գ.⁵ թագավորի և նորընտիր Կոստանդին Գ. Կեսարացի Կաթողիկոսի ճնշմամբ տեղի ունեցած Սսի Ե. ժողովի որոշումներում խնդրի վերաբերյալ ասվում է. «Եւ զի բաժակն ոչ անապակ գինոյ է անուն, այլ ամանոյն, յորում խառնի ջուրն և գինին, ըստ որում և աստուածային Սողոմոն վկայէ, թէ՛ «Խառնեաց ի խառնարանս գգինի իւր», և դարձեալ ասէ. «Արբէք գգինին, գոր խառնեցի ձեզ. զամանն, յորում խառնի ջուրն և գգինին»⁶: Սակայն ի պարբերություն վերագրյալի՝ մեր Եկեղեցու ուղղափառ վարդապետության ջարդագով հայրերը պնդում են, որ «բաժակ» բառն այսպեղև անապակ գինու անունն է:

Սսի վերագրյալ ժողովի որոշումների դեմ գրված Մովսես վրդ. Երզնկացու († 1325) «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի Սուրբ Խորհուրդն ի թովս ԶԾԸ» հայտնի երկասիրության մեջ վերաբերյալի մասին կարդում ենք. «Ո՛վ դուք, որ զայդ ասէք և ոչ պարկառէք. յորժամ ասէ՛ «քանիցս անգամ թէ ըմպիցէք զբաժակս», միթէ զամա՛նն ասաց ըմպել, և ո՛վ ի մարդկանէ զպնակ կամ զգուշ կամ զսկիի էարբ: Տեսանէ՞ք թէ անգ-գուշութիւնդ ուր տանի գձեզ հանէ: Նոմանուն է բաժակն, զի և զջարջարանսն բաժակ ասէ. «Կարէ՞ք ըմպել զբաժակն, գոր ևս ըմպելոց ևս», ասաց Տէրն»⁷: Ինչպես տեսնում ենք, Մովսես Երզնկացին ոչ միայն հանդիմանում է ընդդիմադիրներին, որ «բաժակը» այսպեղև գինու անունն է, այլ նաև Սուրբ Գրքի հիման վրա տանում է բաժակ-ջարջարանքներ զուգահեռը: Վերջինս իբրև գորավոր հակափաստարկ վկայակոչում է ավերարանիչների խոսքերը, որ Տիտուսը վերցրեց բաժակը, գոհություն հայտնեց, քվեց աշակերտներին և ասաց, որ բոլորը խմեն դրանից, որովհետև իր արյունն է՝⁸: Ներսիսաբար «բաժակ» ասելով՝ նրանք նկատի ունեին ոչ թե բաժակը, այլ նրա միջի անապակ գինին: Այս առիթով Մովսես վարդապետը մեջբերում է նաև Սուրբ Պարարագի ժամանակ պարարագիչ հոգևորականի կողմից ասվող մի հարված. «...և զբաժակս օրինեալ

4 Եզնիկ արեղա Պերրոսյան, Մովսես Երզնկացու «Ընդդիմադրութիւն սակս ջրոյն խառնման ի սուրբ Խորհուրդն ի թովս Նայոց. ԶԾԸ.» դավանաբանական թողթը. «Էջմիածին», 1974, Ժ, էջ 49:

5 Բանասիրության մեջ կոչվել է նաև Լևոն Գ. խնդրի մասին. տե՛ս Արել քահանայ Օղյուզեան, Մարենագրական հեղափոխություններ Մովսես վարդապետ Երզնկացու գրական առեղծուածի շուրջ (այսուհետ՝ Մովսես Երզնկացի), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 34:

6 Աղեքսանդր վ. Պալման, Պարմության կաթողիկէ վարդապետութեան ի Նայս և միութեան նոցա ընդ Նոմեական Եկեղեցոյ ի Փորներեան սինեոդոսի, Վիեննա, 1878, էջ 276-277:

7 Մովսես Երզնկացի, էջ 111, տե՛ս Մարթ. Ի. 22-23, ԻԶ. 39:

8 Մովսես Երզնկացի, էջ 150:

արին սպուգապես արասցես Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»⁹: Այնուհետև նա ընդգիծանում է հակառակորդներին՝ ասելով. «Միթե զամա՛նն ասէ զայս, ո՛վ չարաւիտա դու, որ շաղակրարես, թէ բաժակ ամանոյն ասէ»¹⁰:

Այս մասին արժեքավոր դատողություններ է կատարում նաև Սուրբ Գրիգոր Տաթևացին (1346-1409): Եռամեծ վարդապետն իր «Մեկնութիւն Յոհաննու Անտարաքսին» գործում գրում է. «Զի թէ ասնն բաժակ անունն անաթոյն է եւ ոչ գինոյ, վասն այսր զիտելի է, զի թէ անաթոյն էր անուն, ապա ուրեմն ոչ զիտելմբ զինչ կայր յանաթն յայն՝ կաթն, թէ՛ մեղր, թէ՛ ջուր, զի յետ բաժակին ոչ այլ ինչ անուանեաց՝ զինի կամ ջուր, իսկ զանաթն դարարկ զիա՛րդ ըմպել քայր մեզ, ապա ուրեմն յայր է, զի բաժակն ասար վասն գինոյն ասաց, որ էր անապական»¹¹: Ներաբերքական է, որ բաժակ-անապակ զինի գուգահեռն է քանում նաև Վենետիկի Միխիթարյան միաբանության անդամ Գաբրիել վրդ. Ավետիքյանը (1751-1827) Պողոսի թղթոց իր մեկնության մեջ: Նա, մեկնելով Ա. Կորնթ. ԺԱ. 25 համարը, նշում է, որ Քրիստոս «առ նաև զբաժակ լցեալ զինով»¹²:

Այս մասին խոսում է նաև Կիպրիանոս Կարթագենացին (Գ. դ.) իր հայրնի նամակում. «Եվ երբ խաղողի արյան մասին է նշվում, այն միայն նշանակում է, որ Տիրոջ բաժակի միջի արյունը գինին է»¹³:

Եվ ուղղափառները, եւ՛ կաթոլիկներն իրենց գրվածքներում պնդում են, որ երբ Նիստուր հասարակաց Սուրբ Նաղորդության խորհուրդը, Տիրոջ վերցրած բաժակը ջրախառն էր: Իբրև ապացույց՝ նրանք նշում են, որ հրեաները Զարկի փոնի ժամանակ միշտ գինուն ջուր էին խառնում: Իսկ քանի որ Նիստոսն աշակերպների հետ ընթերցելու հրեական սովորության համաձայն կատարեց, ուստի այս ամենից հետևում է, որ բաժակը ջրախառն էր¹⁴: Սակայն ավետարանական այս հարվածն այլ կերպ է ընկալվել մեր Եկեղեցում:

9 «Խորհրդարեպոյ Սրբոյ Պարարագի ըստ ծիսի Առաքելական Սուրբ Եկեղեցոյ Նայասարանեայց, Վաղարշապատ», 1880, էջ 15, **Մովսէս Նրզնկացի**, էջ 152:

10 Անդ:

11 **Ս. Գրիգոր Տաթևացի**, Մեկնութիւն Յոհաննու Անտարաքսին, աշխատասիրությամբ Ղուկաս արեղա Զաքարյանի, խմբագիր Արշավիր Գաբուշյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2005, էջ 609:

12 Մեկնութիւն չորեքասան թղթոց երանելոյն Պողոսի առաքելոյ: Արարեալ ըստ ողջամիտ շաղագ վարդապետաց եկեղեցոյ, ընտրութեամբ հարազատ բնագրի հայկական թարգմանութեան, հանդերձ բացարձակութեամբ այլոց թարգմանութեանց: Աշխատասիրութեամբ Տ. Ն. Գաբրիելի արժանաւարկ վարդապետի Անտիքեան կոստանդնուպոլսեցոյ, յաշակերտութենէ նախապարիս Աբբայի Տեառն Միխիթարայ Րաբունապետի, Կ. Ա. Վենետիկ, 1806, էջ 889:

13 Ancient Christian writers, The letters of St. Cyprian of Carthage, translated and annotated by G. W. Clarke, Vol. III, Letters 55-66, New York, 1986, էջ 101:

14 Այս մասին փն «Մբբազան Պարարագամարոյցք Նայոց», Թարգմանութիւնք պարարագաց Յունաց, Ասորոց եւ Լարիկացոց հանդերձ քննութեամբ, նախագիտելոք եւ ծանօթութեամբ ի Ն. Յովսէփայ վ. Գաբրիէան, հրապարակեալ հանդերձ յաւելածովք ի Ն. Յակովբոսէ Վ. Տաշեան, Վիեննա, 1897, էջ 14-15, «Православно-догматическое богословие», Макария Митрополита Московскаго Коломенскаго, т. II, С.-Петербург, 1883, էջ 378, «Историческое, Догматическое и Тайнственное изъяснение Божественной Литургии», составлено Иваном Дмитриевским, Москва, 1993, էջ 56, 58, 60; **Епископ Виссарион**, *Толкование на Божественную Литургию по чину святителя Иоанна Златауста и святителя Василия Великого*, Свято-Троицкая Сергиева Лавра, 1996, էջ 21: Նին Եկեղեցու ամենաբեղմնավոր գրողներից Որդիները (185-253) Երեմիայի մարգարետյանը նվիրված ճառական շարքում խորհրդանշական փոխանկյունից մերժում է Տիրոջ կողմից ջրախառն բաժակ օգտագործելը. փն **Origen**, *Homilies on Jeremiah, Homily on 1 Kings 28, Fathers of the Church 97*, translated by John Clark Smith, The Catholic University of America Press, United States of America,

Նայոց Եկեղեցու ուղղափառ վարդապետության բոլոր ջարագովները միաբերան նշում են, որ Ավերաբանում ջրի մասին որևէ խոսք չկա, ուստի ճիշդ չէ Նաղորդության բաժակի մեջ ջուր ավելացնել, քանզի եթե այդպիսի բանի կարիք լիներ, ապա ավերաբանիչներն անապաման կանդրադառնային դրան: Ավելին՝ Քրիստոս առաջինն այդ մասին կասեր, բայց քանի որ այդ մասին որևէ խոսք կամ ակնարկ չկա, ուստի սխալ է ջրի խառնումը Սուրբ բաժակի մեջ¹⁵:

Ավերաբանական այս հարվածի Նայոց Եկեղեցու ընկալման վաղագույն մեկնաբանություններից մեկը պահպանվել է նշանավոր մարենագիր, ասորվածաբան, մեկնիչ, թարգմանիչ, քերական, երաժիշտ և բանաստեղծ Սյուրեֆանու Սյունեցու († 735) «Վասն անապականության մարմնոյն» դավանաբանական մեծարժեք աշխատության մեջ, որ ժամանակին «Արարար» ամսագրում հրապարակել է հայագիտության նվիրյալ Գալուստ Տեր-Մկրտչյանը (1860-1918): Աղբյուրագիտական առումով այս կարևոր երկում Սյուրեֆանու Սյունեցին մեջբերում է Ընդհանրական Եկեղեցու փաստերի վարդապետներից մեկի՝ Սուրբ Աթանաս Ալեքսանդրացու (295-373) աշխատությունից մի հարված, որտեղ նա հստակ գրում է անապակ բաժակի մասին. «Իբրև կապարեաց Տէրն զմեծ խորհուրդն և ճաշակեաց ընդ աշակերպսն, առեալ հաց յանապական ի ձեռնս իր և յամբիծ, հայեցաւ յերկինս և գոհացաւ, եր աշակերպացն իւրոց և ասէ. Առէք, կերայք ի դմանէ ամենեքեան, այս է մարմին իմ անապական», սոյնպէս և զբաժակն առ յանապակ և յամբիծ ի ձեռնս իր, արինեաց, եր աշակերպացն իւրոց...»¹⁶:

Սուրբ Նովհան Օձնեցին եկեղեցու հիմնարկերին նվիրված ճառում, անդրադառնալով եկեղեցու հիմքում դրվող փաստերի քարերի՝ ջրով և գինով լվանալուն, ասում է. «Նկարագրեն սոքա զերկոպասան առաքեալսն, զորոց լուաց Տէրն զոյսն ի վերնա-

1998, էջ 112-113: <http://www.newadvent.org/cathen/05584a.htm>

15 Սյուս քրիստոնեական եկեղեցիները, իբրև սպացույց Քրիստոսի կողմից օգրագործված ջրախառն բաժակի, վկայակոչում են նաև առկա Պապարագամարույցները, ուր խոսվում է Քրիստոսի կողմից ջրի խառնման մասին. Կեն **Սովսես Երզնկացի**, էջ 92-95:

16 «Սյուրեֆանուսի Բմասպասիքի ասացեալ վասն անապականության մարմնոյն, որք ասեն, թէ՛ Որ աճէ և նուազէ, ապականացու է: Եւ վասն զի մարմինն Քրիստոսի աճէր և զարգանայր և ապականացու ոչ էր, զի Աստուծոյ մարմին էր՝ վկայութիւնք սրբոց և աստուածազանից, որք անապական խոստովանին յարգանդէ և յափստեան յափստեանց», «Արարար», 1902, Մարտ-ապրիլ, էջ 387-388: Ի դեպ՝ անապակ բաժակի մասին մեր եկեղեցական մարենագրության մեջ Կոմիդաս Կաթողիկոսի անվամբ շրջանառվել է «Կոմիդասի Նայոց Կաթողիկոսի և Պիտիոսի արշիպատրիարքի հարցաքննութիւն և վիճաբանութիւն վասն հաւարոյ և կարգաց եկեղեցոյ» երկբայական երկը, որից մեկ հարված է մեջբերել Վարդան Այգեկցին դավանաբանական իր աշխատության մեջ. «Արդ, ի վերնաբանսն առ Յիսուս հաց և գինի, և ջուր ոչ ասաց, և ի բերդ որոյն ասաց յեր Յարութեան ըմպել». Կեն **Վարդան Այգեկցի**, Գիրք հաստատութեան և Արմատ հաւարոյ (այսուհետ՝ Արմատ հաւարոյ), քննական բնագիրը կազմեց Շահն քահանայ Նայրապետեանը, ներածութիւնը՝ Յակոբ Քնոսեանի, Երևան, 1998, էջ 261: Այգեկցու աշխատության ներածականում բանասեր Նակոբ Քոսեյանը կարծիք էր հայտնել, թե վկայաբերվող հարվածը հավանաբար հայերեն ձեռագրերում Կոմիդաս Կաթողիկոսի անունով ավանդված վերոգրյալ գործից է: Սակայն «Մարենագիրք հայոց» շարքում տպագրված բնագրում, որը կազմել է Նակոբ Քոսեյանը, հարվածն բացակայում է և այդ մասին որևէ ծանոթագրություն չկա. Կեն «Մարենագիրք հայոց», Դ. հատոր, Է. դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 312-326: Ի դեպ՝ այս բնագրում օգրագործվում է ՆԲՎ-ում բացակայող **ջրապղծոր** բառը, որը, մեր կարծիքով, կրկին ակնարկ է անապակ բաժակի խնդրի մասին (էջ 322):

յրանն, և ապա գինեաւ անապականաւ զմայլեցոյց՝ ի յիշարակ ջրոյն և արեանն, գոր թղխեաց ի կողից իւրոց»¹⁷:

Է.-Ը. դդ. դավանաբան հեղինակ Խոսրովիկ Թարգմանչի գործերից պահպանվել է մի փոքրածավալ երկ, որը պարասխան է Անրիոթի Նայրապետներից մեկի հարցումներին՝ կապված Սուրբ Ծննդյան Կրոնի կապարման հետ: Քննարկվող համալսարանում այս գործը կարևորվում է նրանով, որ աստվածաբան հեղինակը զուգահեռաբար անդրադարձ է կատարում նաև անապակ գինու խնդրին: Անդրադառնալով Անրիոթի նվիրապետի այն հարցին, թե արդյո՞ք Տերը խորհուրդն ավանդելիս ջուր չխառնեց, Խոսրովիկը պարասխանում է. «Յաւերարանն ոչ է գրեալ. զի ինքն զխորհուրդն գինեաւ աւանդեաց և ասէ այսպէս. «Ոչ և արբից ի բերոյ որթոյ, մինչև արբից զսա նոր ընդ յարբայութեանն»¹⁸: Վարդան Այգեկցու (ԺԲ-ԺԳ. դդ.) «Արմար հաւաքոյ»-ում անապակ բաժակի մասին Խոսրովիկից պահպանվել է մեկ այլ վկայություն ևս, որը հավանաբար նրա առաջմ մեզ անհայտ դավանաբանական մի երկից է. «Արդ, գրէ առաքեալն Պաւղոս. Տէր Յիսուս ի գիշերին, յորում մարներ, առ հաց զբաղարջն ի սեղանոյն ըստ արինացն, և զբաժակն գինով առանց ջրոյ. Մեղ(ք)խեղեկ հաց բաղարջ և անապական գինի բաշխէր ի վերայ գերեզմանին Ադամայ, որ գուշակէր զանապական ծնունդն Տեառն ի Կուսէն»¹⁹:

Վերագրյալ երեք վկայությունները փաստում են, որ արդեն Է. դարի վերջին և Ը. դարի սկզբին հայ մարենագիները, Վերնաբան Ավանդության մասին խոսելիս, նշում են բաժակի անապականության և Քրիստոսի կողմից ջուր չօգտագործելու մասին: Ներառա հեղինակները շարունակել են ուղղափառ այս գիծը՝ նորանոր օրինակներով ապացուցելով անապակ բաժակի Նայոց Եկեղեցու Ավանդության ճշմարտացիությունը:

Անանիա վրդ. Սանահնեցին (ԺԱ. դ.) նույնպես այս հարցում ընդդիմանում է օտարներին՝ շեշտելով, որ Քրիստոսը Վերնաբանին իր աշակերտներին անապակ գինի մատուցեց և ոչ թե քացախ՝ այս չարափառ ուսմունքը կապելով Քրիստոսի բնության խնդրի հետ: «Եւ արդ, ցոյց մեզ զթո խառնափնդորեալ խորհուրդն. ընդէր ոչ ասէ՝ առ քացախ, այլ ասէ՝ առ բաժակ, և ոչ ասէ՝ առ խմոր քացախեալ, այլ ասէ՝ առ հաց կենաց: Արդ, քաջայայտ է յերեւելեացդ, զի քացախ ոչ բաժակ է, այլ ապականեալ գինի, և խմոր ոչ զանկուած ալերէ, այլ հաց քացախեալ, և երկոքեանն ապականեալ են արարաբոյ բնութեան, գոր և խորհիք իսկ ի վերայ անապական բնութեան Քրիստոսի՝ ապականացու գով կարծելով, որ է չարափառութիւն: ...Եւ արդ, յորժամ Տէրն ի վերնաբանն արբոյց աշակերտացն ինքն արբ ընդ նոսա, բաժակ անապական էր և ոչ քացախ, զի զքացախն ի Խաչին արբ ի փրկաստան ժողովոյն ի յանարգանս և ոչ ի պարիս»,- գրում է Անանիա վարդապետը²⁰:

17 «Յովհաննու Իմաստասիրի Ամենցոյ մատենագրութիւնք», Վննեպիկ, 1833, էջ 120:

18 **Գարեգին վրդ. Յովսէփեան**, Խոսրովիկ Թարգմանչի, Վաղարշապատ, 1899, էջ 194-195:

19 Տե՛ս «Մարենագիրք հայոց», Զ. հարոր Ը. դար (Յաւելուած), Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 708, Արմար հաւաքոյ, էջ 62-63, **Ն. Յովովրոս. վ. Տաշեան**, Մարենագրական մանր ուսումնասիրութիւնք, մասն Ա, Վննեա, 1895, էջ 67:

20 **Նալոթ Զյոսեյան**, Աստվածաբանական բնագրեր, ուսումնասիրություններ, Ա. Անանիա Սանահնեցի,

Այս առիթով Մխիթար վրդ. Սասնեցին (ԺԳ-ԺԴ. դդ.) գրում է. «Քանզի եւ նոյն ինքն առաջինն զոր աւանդեաց Տէրն առաքելոցն սրբոց առանց խառնման ջրոյ իմանի եւ ոչ խառնեալ ապականաբար եւ յայր անարի է զոր ասացն. «Առէք, արբէք ի դմանէ ամենեքին, այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ վասն բազմաց հեղու ի թողութիւն մեղաց», եւ թէ՛ «Ոչ արբից ի բերոյ որթոյ. եւ որթն գինի եւ ոչ ջուր ծնանի»²¹:

Նայոց Եկեղեցու ծիսաստարվածաբանական այս հավաքամբի մեկ այլ վկայություն է պահպանվել Եսայի վրդ. Նչեցու (1260-1338) «Թ-ուղթ Եսայեայ վարդապետին պատասխանի ընդդէմ պարոն Նկեմոյ» գործում, որում բաբունապետը, ի շարս այլ խնդիրների, անդրադարձել է նաև Սուրբ Նաղարդության բաժակի մեջ ջուր խառնելու խնդրին: Որպես Նայոց Եկեղեցու վարդապետության ջերմեռանդ պաշտպան՝ նա նույնպես հստակորեն նշում է, որ Քրիստոսը խորհուրդն ավանդելիս ջուրն ընդհանրապես չհիշեց. «Քրիստոս զայս խորհուրդ աւանդեաց եկեղեցոյ իւրոյ, ընդ չորէսին աւերարանչացն վկայութեան գինի առ ի ձեռս եւ ասաց՝ Այս է արիւն իմ, եւ ջուր բնաւ ոչ յիշեաց»²²: Սրան համահունչ է նաև Ներսէս Շնորհալու († 1173) րեսակերը, որ նույնպես ընդգծում է, որ Քրիստոսը խորհուրդը հաստատելիս միայն գինի վերցրեց եւ ջրի անունն ընդհանրապես չգրկեց²³:

Վերնաբան Ավանդության ընկալման անուրանալի վկայություններից է նաև Սուրբ Պարարագի Նովիաննէս Արճիշեցու (ԺԲ-ԺԳ. դդ.) մեկնությունը, որտեղ հեղինակը փաստում է այն իրողությունը, թե՛ «Զի Տէր մեր Յիսուս Քրիստոս ի վերնաբանն հացն զոր խնդրեաց բաղարջ էր, եւ գինին անապակ, զի կոսածին մարմնոյն այս էր ի դէպ առանց խառնումոյ: Եւ արդ, կարի գեղեցիկ է մերս եւ անուշահոտ. հացն անխմոր եւ բաժակն անապակ»²⁴:

Անապակ բաժակի Նայոց Եկեղեցու Սրբազան Ավանդության հիմնավորումների շարքում արժանահիշատակ է նաև Սյունիանոս Օրբելյան պարմիչի «Նալաճառութիւն» աշխատությունը, որում նա մասնավորապես ասում է. «Ո՛վ թշուառք՝ անցայք գիտութեամբ եւ զօրութեամբ ընդ նոյն իսկ քուիչն այսմ պարզեաց եւ յաւելիք ի վերայ

Ս. Էջմիածին, 2000, էջ 253: Ըստ բանասեր Նրաչյա Թամրազյանի՝ Սանահնեցու անվամբ մեջբերված այս հարվածը Ժ դարի նշանավոր եկեղեցական Անանիա Նարեկացու «Նաւարարմար» դավանաբանական աշխատությունից է: Քանի որ մեր ուսումնասիրության համար էական չէ հեղինակային պարզանեղության խնդիրը, այլ առանցքային են անապակ բաժակի հարցում Ժ-ԺԱ դարերի մեր մարենագիրների մարմնամները, ուստի նշում ենք նաև «Նաւարարմարի» հրատարակության էջերը. «Մարենագիրք հայոց», Ժ. հարոր Ժ. դար, էջ 530-531:

21 Mxita'r Sasneç'i's theological discourses, edited by S. Peter Cow, Corpus Scriptorum Christianorum Orientalium 542, Scriptores Armeniaci 21, Leuven, E. Peeters, Lovanii, 1993, էջ 84:

22 Մաշտոցի անվան Մարենադարան (այսուհետ՝ ՄՄ) ձեռ. Ն^թ 9622, թ. 728:

23 «Թ-ուղթ ընդհանրական՝ արարեալ երիցս երանեալ սուրբ Նայրապետին մերոյ րեսան Ներսիսի Շնորհալոյ», Ս. Էջմիածին, 1865, էջ 135, 181-182, **Կիրակոս Գանձակեցի**, Պարմութիւն Նայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 131: Նույն այս վկայությունները րեն «Նանդիսարան ուղղափառութեան Նայոց Եկեղեցոյ», յօրինեաց Տէր Մարթէոս արքեպիսկոպոս նախորդ Պարպիարք Կոստանդնուպոլսոյ, Կոստանդնուպոլիս, 1854, էջ 339:

24 «Մեկնութիւն ահաւոր խորհրդոյ Սրբոյ Պարարագին, արարահանեալ ի մեկնութեանց Խոսրովու Անճնացեաց եպիսկոպոսի եւ Ներսիսի Լամբրոսացոյ վերաբնեցին Տարսոսի, կարճելով եւ պարզաբանելով ի Յօհաննու Արճիշեցոյ», Կոստանդնուպոլիս, 1799, էջ 19-20:

նորա գիտնորն և գջորն. ո՞չ ասէր առ աշակերպսն՝ ի վեր առեալ զբաղարջն և զանապական գինին. «Ջայս արարէ՛ր առ իմոյ յիշարակի». ընդէր ոչ յառել գիտնորն և (ոչ) ի կիր էարկ գջորն»²⁵: Բացի այդ, երբ Քրիստոսը վերցրեց անապակ գինին, ասաց. «Սա է Նոր ուխտի իր արյունը» և ոչ թե՛ «Սա է ջուրը և Նոր Ուխտի իմ արյունը»²⁶:

Հիմնահարցի լուսաբանության գործում մեծ կարևորություն ունի նաև Երզնկայի դպրոցի նշանավոր մեկ այլ ներկայացուցչի՝ Կիրակոս վրդ. Երզնկացու († 1355) պատասխանն այն հարցին, թե արդյոք պե՛րք է ջուր խառնել Սուրբ Պատարագի խորհրդի ժամանակ: Կիրակոս բարունապետը ևս մեկ անգամ փաստում է, որ Քրիստոսը նախ խորհուրդը Վերնաբան մեջ հաստատեց, ինչպես որ գրված է Ավետարանում, ապա մեջբերում Դուկասի Ավետարանի ԻԲ 18-19 համարները՝ գրելով. «Զի առանդող խորհրդոյդ Քրիստոս է և ոչ այլ ոք, և Նա ջուր ոչ առանդեաց, այլ գինի»²⁷: Նույն այս փոխակերպումն ևս պաշտպանում Սուրբ Գրիգոր Տաթևացին, Ղազար Ջահկեցին, Մակար Եպիսկոպոսը²⁸ և ուրիշներ:

Վերագրյալ բոլոր վկայությունները փաստում են, որ Նայոց Եկեղեցին անփոփոխ մտրեցմամբ ջուր չխառնելու համար որպես հիմք վկայակոչել է Սուրբ Ավետարանը՝ պնդելով, որ Սուրբ Նաղարդության խորհուրդն ավանդելիս մեր Տերը ջուր չի խառնել և ոչ էլ ջրի անուն է փոխել, ուստի ավելորդ է նաև ջրախառնությունը: Իսկ Աստվածաշունչ մապյանի հաղորդածից դուրս, մնացած ամեն ինչ արդեն մեկնաբանության ծիրում է՝ կախված այս հարցում քարքեր Եկեղեցիների ընկալումներից: Մեր Եկեղեցու հայրերից մեր քաղած մեջբերումները ցույց են տալիս, որ Վերնաբան Ավանդությունը (ի նկարի ունենք Քրիստոսի կողմից անապակ գինի վերցնելը) սկսած Ե. դարից²⁹ կենցաղավարել

25 «Պարմոթին նահանգին Միսական՝ արարեալ Սրեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Միսնեաց», Թիֆլիս, 1910, էջ 457, «Տեսոն Սրեփաննոսի Միսնեաց նախագահ արքիեպիսկոպոսի Նակաճառութիւն ընդդէմ երկաբնակացն» (այսուհետ՝ Նակաճառութիւն), Կ. Պոլիս, 1756, էջ 68:

26 Նակաճառութիւն, էջ 70:

27 **Վենքիս քահանայ Դանիէլեան**, Կիրակոս Երզնկացի. «Գանձասար» աստուածաբանական հանդես, Խ. Զ. Երեւան, 1996, էջ 566:

28 Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 595, **Սուրբ Գրիգոր Տաթևացի**, Մեկնութիւն Յոհաննու Անտարանին, աշխարասիրոյթյամբ Դուկաս արեղա Զաքարյանի, խմբագիր Արշավիր Գաբրիելյան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2005, էջ 608, **Ղազար Ջահկեցի**, Աստուածաբանական դրախտ ցանկալի (այսուհետ՝ Դրախտ ցանկալի), Երուսաղէմ, 2002, էջ 338, **Մակար Եպիսկ. Բարխուդարեանց**, Քրիստոնէական վարդապետութիւն Նայսաբանեայց Առաքելական և Սուրբ Եկեղեցու, Տիֆլիս, 1895, էջ 99:

29 Այսպէղ նկարի ունենք նաև Ոսկեդարի հեղինակ Սուրբ Եղիշէ վարդապետի հետևյալ վկայակոչումը. «Բանգի եր քառաջագոյն աշակերպացն ի ժամ ընթրեացն, յորժամ կամա մաքրել ի ձեռս անօրինաց, առեալ զհացն և զգինին ի փառս Տօր. զի մինչ դեռ էր ի մարմնի, անձամբ անձին յիշարակ մարմուցաներ, և կերող գինքն և զառաքելայսն գոյգ հասասարէր: Որպէս և մեծն Դոդոս խորհրդակիցն Քրիստոսի ասէ՝ թէ «Նացն զոր բեկանեմք, հաղորդութիւն է մարմնոյն Քրիստոսի. և բաժակն զոր օրհնեմք, ո՞չ ապաքն հաղորդութիւն է արեանն Քրիստոսի: ...Նացն և գինին ոչ որպէս էրն քառաջ՝ նոյնպէս լինի, այլ մարմին և արին ճշմարիտ Քրիստոսի, ոչ ապականացուի ուրուք, այլ անապականի. և մերձեցեալ ուրուք արժանապէս՝ զապականութիւնս մեր յանապականութիւն դարձուցանէ: Եւ է սա յիշարակ արարեալ Աստուածն Բանի կարարեալ և կուսածին մարմնոյն, զոր ոչ կարաց մահ արգելով ընդ ապականութեամբ և խառնեալ ի սա Տեսնն ըստ իւրոյ բարեբարութեանն, և յիշարակ մերոյ մարդկութեանս». «Մբոյս հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մարմնագոյութիւնը», Վենեպիկ, 1859, էջ 358: Եղիշէ վարդապետի այս վկայութիւնը Նայոց Եկեղեցու կողմից Վերնաբան Ավանդության ընկալման առաջին դեպքն է, բայց այն քարքերութեամբ, որ Ե. դարից սկսած հեղինակներն արդեն չեղյում են, որ Քրիստոս Վերջին ընթրիքի ժամանակ անապակ գինի

և ամրագրվել է մեր եկեղեցական մարենագրության մեջ և բյուրեղացել է հայ վարդապետական մարքի անդաստանում: Մեկ բան պարզ է և անառարկելի, որ այս Սրբազան Ավանդությունը շատ հին է և Եկեղեցու ծոցում արմարացած ավանդության ուժով մեջբերվել է զանազան հեղինակների կողմից: Անառարկելի է նաև այն, որ եկեղեցական այս Սրբազան Ավանդության նկարմամբ հայ աստվածաբաններից և վարդապետներից որևէ մեկն անգամ չի երկմարել այս հարցում: Նեղ այս Ավանդությունն էլ դարձել է անապակ գինով պարարագելու հայոց Եկեղեցու դիրքորոշման հիմքերից մեկը, ինչպես նաև հզոր կռիվան՝ ընդդեմ ջրախառնության կողմնակիցների:

Նկարաբերական է, որ այդ կարծիքը չեն մերժում նաև կաթոլիկները: Այսպես՝ կաթոլիկ հանրագիտարանի «Ջրի ծխական օգրագործումը» բառահոլովածում առանց այլևայության, պարզ ի պարզ առվում է. «Ինչ վերաբերում է Պապարագի մեջ գինուն ջուր խառնելուն, ամենավաղ ժամանակի հայրերը փորձել են պարճառաբանել, թե ինչո՞ւ է Եկեղեցին օգրագործում խառնյալ բաժակ, մինչ ավերարանական պարմությունն ակնարկում է, որ հիսուսը սրբագործեց անխառն գինին»³⁰: Դրանից հետո մեջբերվում են ավերարանական այդ հարվածի մասին Եկեղեցու փառքեր հայրերի մեկնաբանությունները: Միով բանիվ՝ կաթոլիկները չեն մերժում -Քրիստոսի կողմից անխառն գինու օգրագործումը Սուրբ Հաղորդության խորհրդի հաստատման ժամանակ³¹: Եվ ինչպես աներկբա վկայում են փաստերը, հայոց Եկեղեցու համար Հաղորդության խորհրդի հաստատման մասին Սուրբ Գրքի վկայությունն ամենակարևորն է և միակը, իսկ մնացյալ բոլոր մոպեցումները որակվում են որպես ածանցյալ, ժամանակի եկեղեցական հեղինակների կողմից հիմնահարցին փրված զանազան մեկնաբանություններ:

Այս հարցում կաթոլիկներին սուր քննադատության է ենթարկում նաև Միքայել վրդ. Չամչյանը, ով, անկասկած, գիրակ էր հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու դավանանքին: «Դիրանհար որոշումն ինչ էն եղեալ վասն խրեանցայնոց, իբր զի զայն ինչ գոր փեսանեն, այժմոս պահեալ յիւրեանց միջի. վճիռ հարանեն, թէ առաքելական աւանդութիւն է այն, և կամ նա և Տէրունական թեպէր իրօք իսկ է եկեղեցական»³², - գրում է նա՝ հավելելով. «Չայն գոր փոխեալ են ինքեանք ի գործոյ իւրեանց ձեռնարկելով հեպեցուցանեն, թէ այս ինչ աւանդութիւն փոփոխելի լեալ իցէ, իսկ զայն գոր ինքեանք պահեալ իցեն, և այլք փոխեալ կամ ի նախնեաց այլ ազգ առեալ պնդեն, թէ անփոփոխ պարտ է լինել»³³: Ուստի այս ամենից Միքայել Չամչյանը եզրակացնում է. «Անջուր առնելն հայոց ընդդէմ է այնմ մրացածին ենթադրութեան...և ոչ այնմ գոր արար -Քրիստոս, և առաքեալք նորա

օգրագործեց:

30 "The Catholic Encyclopedia", Vol. XV, New York, 1912, էջ 564:

31 Ի դեպ՝ 1987 թ. Վարդիկանը թույլատրեց հայ կաթոլիկներին վերադառնալ նախնի սովորությանը և պարարագել անապակ գինով: Այս կապակցությամբ մեզ ուղղված նամակում նշանավոր ծխագետ Ռոբերտ Թաֆթը գրում է. «Այսպիսով դավանաբանական խնդիրն այս հարցում ավարտված է»: Սա ես մեկ անգամ հաստատում է, որ հռոմեական Կաթոլիկ Եկեղեցին ընդունում է անապակ գինով պարարագելու մեր Սրբազան Ավանդությունը:

32 ՄՄ ձեռ. ՇՊ 9030, թ. 56ա:

33 «Վահան հաւաքոյ ուղղափառութեան հայաստանեայց Եկեղեցոյ», յօրինեալ ի Տ. Միքայել Վարդապետ: Չամչեան, Կալկաթա, 1873, էջ 52:

նոյնպէս, ապա թէ ոչ որ կարողնէ ցուցցէ զջրախառնութիւն լինել աւանդութիւն -Քրիստոսի կամ առաքելոց, բանիւր ոչ ինչ վճարի, բան Աւետարանին ի կողմն հայոց է, եւ այլուստ չիք հաստատում վկայութիւն, այլ կամ կարծիքական, կամ յերկոց յօդեալ մանաւանդ թէ կան այնպիսի վկայութիւնք որք ապացուցանեն, թէ սոսկ եկեղեցական աւանդութիւն է ջուրն եւ ոչ իւրիք առաքելական կամ րէրոնական»³⁴: Բայց չբավարարվելով այդ ամենով նա նաեւ հավելում է. «Ապա հարկ է խոստովանիլ, թէ որք խնդրեն զծագումն սովորութեան հայոց վասն անապակ բաժակի, պարտին դիմել ի վկայութիւն ազգիս հայոց քան օտարաց: ... Ոչ կարէ որ յիմաստուն աստուածաբանից պահանջել ի մէնջ, թէ վկայ ի մէջ ածէք առ ի ցոյց հնութեան անապակ բաժակի զԼարին հեղինակ կամ զՅոյն, կամ զԱսորի, կամ զԽոմ, կամ զԳոմ: Վասն զի այս ազգ ոչ են ի մասնէ ժողովրդեան, զոր դարձոյց սուրբ Գրիգոր Լուսաւորիչ հայաստանեայց ի հաւաքս -Քրիստոսի, որպէս զի մարթասցին զիւրել, թէ զիա՛րդ աւանդեալ իցէ Լուսաւորիչն՝ զգործածութիւն սուրբ բաժակի, զի թէ եւ իմաստունք ռմանք օտար ազգի աւանդութիւն արարաբոյ ելանէ քան զսահման իմաստութեան նոցա, ապա հարկէ ի նմին իսկ ազգէ րեղեկանալ զաւանդութիւն ազգին, այսինքն՝ զծագումն սովորութեան անապակ բաժակի»³⁵:

Անշուշտ, Միքայել Չամչյանն այսպէղ ճիշտ դիտարկում է անում՝ հորդորելով անապակ բաժակի ավանդության համար ծանոթանալ հայկական աղբյուրներին եւ Նայոց Եկեղեցու բացարթությանը, այլապէս այս շրջանակից դուրս ցանկացած մեկնաբանություն սխալ է լինելու:

Վերնադրան Ավանդության Նայոց Եկեղեցու ընկալումը մեկ անգամ եւս ցոյց է տալիս եւ ապացուցում, որ անապակ բաժակի հարցում մեր Եկեղեցու դիրքորոշումն անհիմն չէ, հերեւաբար նաեւ չի կարող համարվել մյուսներից պարզապէս փարբերվելու առիթ:

34 Անդ:

35 Անդ, էջ 42: